ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

1101 ք.էջմիածին, Մաշտոցի 0
հեռ. +374(231)52727 ֆաքս.+374(231)45663
էլ. փոստ: echmun@mail.ru

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ

МЭРИЯ
ГОРОДА ЭЧМИАДЗИНА

1101 г.Эчмиадзин, ул. Маштоца 0
тел.+374(231)52727 факс.+374(231)45663
эл.почта: echmun@mail.ru

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR'S MARZ, MUNICIPALITY OF THE CITY ECHMIADZIN
1101 Echmiadzin, st. Mashtots 0 tel. +374(231)52727 fax: +374(231)45663 e-mail: echmun@mail.ru

№ 1378/9Ե3 «13» հոկտեմբերի 2011թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է էջմիածնի քաղաքապետի 12.10 -ի թիվ 434 որոշման քաղվածքը, փոփոխված բյուջեի համապատասխան հատվածները և նախահաշիվները:

Առդիր 34 թերթ:

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Կ. Խաչբերդյան
հեռ. /0231/ 5-36-63 /510/

13.10.2011 ԵՄ/9738-11

ՔԱՂՎԱԾՔ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 434-Ն

«12» հոկտեմբերի 2011թ. ք. Էջմիածին

### ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նվազեցնել՝

1.1. «Բարեկարգում» /բաժին 06, խումբ 2, դաս 1/ «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածը /հոդ. 4252/ 1200.0 հազ. դրամ:

1.2. Բնակ. կոմունալ վարչության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածը /հոդ. 4261/ 1000.0 հազ. դրամ:

2. Ավելացնել՝

2.1. «Բարեկարգում» տնօրինության /բաժին 06, խումբ 2, դաս 1/ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածին /հոդ. 4239/ 200.0 հազ. դրամ և «Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածին /հոդ. 4269/ 1000.0 հազ. դրամ:

2.2. Բնակ. կոմունալ վարչության /բաժին 06, խումբ 6, դաս 1/ «Տրանսպորտային նյութեր» հոդվածին /հոդ. 4264/ 1000.0 հազ. դրամ:

3. Հանձնարարել ֆինանսական բաժնին ծախսերի նախահաշիվներում, ժամանակացույցերում և բյուջեի համապատասխան հատվածներում կատարելու անհրաժեշտ փոփոխությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Իսկականի հետ ճիշտ է

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ [illegible]. ԱՍԼԱՆՅԱՆ

Հավելված N 1

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2 0 1 1 Թ Վ Ա Կ Ա Ն Ի
# Բ Յ Ու Ջ Ե

Փոփոխված է էջմիածնի քաղաքապետի 2011 թ.
հոկտեմբերի 12-ի թիվ 434 որոշմամբ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՏԳԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ